ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/8344-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-173-23.02.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 281 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-173-23.02.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ 1) 1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ օրենք) 21-րդ հոդվածում լրացնել նոր 8.1-ին մաս, համաձայն որի՝ «(…) ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց, իսկ դատական կարգով բողոքարկման դեպքում՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո (բացառությամբ Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացնելու, ինչպես նաև վերաքվեարկություն նշանակելու դեպքերի) արտաքին գովազգային վահանակները տնօրինող կազմակերպությունների, թեկնածուների, ընտրություններին մասնակցած կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների կողմից 7-օրյա ժամկետում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութերը չհանելու դեպքում դրանք 14-օրյա ժամկետում հանում է համայնքի ղեկավարը: Համայքնի ղեկավարը թեկնածուներից, ընտրություններին մասնակցած կուսակցություններից/կուսակցությունների դաշինքներից պահանջում է իր կատարած ծախսերի փոխհատուցում»:

Այս առումով առաջարկում ենք, նախագիծ 1-ով առաջարկվող համայնքի ղեկավարի՝ թեկնածուներից, ընտրություններին մասնակցած կուսակցություններից/կուսակցությունների դաշինքներից՝ իր կողմից քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանելու դեպքում փոխհատուցում պահանջելու լիազորությունը սահմանել «կարող է պահանջել» ձևակերպմամբ՝ այդ պահանջի ներկայացման հարցը թողնելով համայնքի ղեկավարի հայեցողությանը: Հիշյալ առաջարկը բխում է նաև օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներից, համաձայն որոնց՝ գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից եռօրյա ժամկետում քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը չհանելու դեպքում դրանք հանում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարը գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներից, ընտրություններին մասնակցող

կուսակցություններից կարող է պահանջել իր կատարած ծախսերի փոխհատուցում: Հիշյալ նկատառման համատեքստում՝ առաջարկում ենք վերանայել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ 2) 1-ին հոդվածով նախատեսվող կարգավորումը:

Միևնույն ժամանակ՝ հարկ է նշել, որ թեկնածուների, ընտրություններին մասնակցած կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների և համայնքի ղեկավարի կողմից նախագծերով նախատեսվող պարտավորությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ համայնքի ղեկավարի, արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակեր-պությունների ղեկավարների կողմից հիշյալ մասով նախատեսված համապատասխան պարտավորությունների կատարումն ապահովող հստակ մեխանիզմներ, այդ թվում՝ դրանց չկատարման համար պատասխանատվության առումով, օրենսդրությամբ նախատեսված չեն: Ուստի գտնում ենք, որ նախագծերով առաջարկվող հատվածային լուծման փոխարեն անհրաժեշտ է բարձրացված հարցին տալ համապարփակ և ամբողջական լուծում:

2. Նախագծերում պահպանված չեն օրենսդրական տեխնիկայի կանոնները: Մասնավորապես՝

1) նախագիծ 1-ի վերնագրում «ՕՐԵՆՔԸ» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ» բառը՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով.

2) նախագիծ 1-ի վերնագրից անհրաժեշտ է հանել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ» բառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագիծ 1-ի 1-ին հոդվածով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում նախատեսվում է կատարել միայն լրացումներ: Հիշյալ դիտողության համատեքստում՝ նախագիծ 1-ի 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «փոփոխությունները և» բառերը.

3) նախագիծ 1-ի 1-ին հոդվածում վկայակոչված օրենսգրքի լրիվ անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «սահմանադրական օրենք» բառերը.

4) նախագիծ 1-ի 1-ին հոդվածի 1-ին մասում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ լրացնելու միջոցով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագիծ 1-ի 1-ին հոդվածի

2-3-րդ մասերին.

5) նախագիծ 1-ի 1-ին հոդվածի 3-րդ մասում «8.1)-րդ կետ» բառերն անհրաժեշտ է

փոխարինել «8.1-ին մաս» բառերով՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների.

6) նախագիծ 1-ի 2-րդ հոդվածում «հրապարակման օրվան» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակմանը» բառով՝ հիմք ընդունելով «Նորմա-տիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ-ները: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագիծ 2-ի 2-րդ հոդվածին.

7) նախագիծ 2-ի 1-ին հոդվածում «2-րդ մասի 3-րդ կետը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ մասը» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 281-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-173-23.02.2022-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-173-23.02.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» 2016 թվականի մայիսի 25-ի ՀՕ-54-Ն օրենքի 21-րդ հոդվածում կատարել հետեյալ փոփոխությունները եւ լրացումները.

1) Վերնագրում «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում» բառերից հետո ավելացնել «, ընտրությունների արդյունքների վերաբերյալ վերջնական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո» բառերը եւ կետադրական նշանը:

2) 6-րդ մասի 7-րդ նախադասությունում «քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութ փակցնելու» բառերից հետո ավելացնել «եւ հանելու» բառերը:

3) Ավելացնել հետեյալ բովանդակությամբ նոր՝ 8.1)-րդ կետ.

8.1) Ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց, իսկ դատական կարգով բողոքարկման դեպքում՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ընտրություններին մասնակից կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների ղեկավարները, թեկնածուներն ապահովում են, որ ընտրություններին մասնակցած կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների, թեկնածուների քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերը հանվեն:

Ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց, իսկ դատական կարգով բողոքարկման դեպքում՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո (բացառությամբ Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացնելու, ինչպես նաեւ վերաքվեարկություն նշանակելու դեպքերի) արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների, թեկնածուների, ընտրություններին մասնակցած կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների կողմից 7-օրյա ժամկետում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերը չհանելու դեպքում դրանք 14-օրյա ժամկետում հանում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարը թեկնածուներից, ընտրություններին մասնակցած կուսակցություններից/ կուսակցությունների դաշինքներից պահանջում է իր կատարած ծախսերի փոխհատուցում:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-173[1]-23.02.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.1)-րդ կետով.

3.1) Հանում է քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով՝ թեկնածուներից, ընտրություններին մասնակցած կուսակցություններից/ կուսակցությունների դաշինքներից պահանջելով իր կատարած ծախսերի փոխհատուցում:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները եւ նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանվում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերի օգտագործման, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերի հանման կարգը: Սակայն Օրենքում որեւէ կերպ կարգավորված չէ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց, իսկ դատական կարգով բողոքարկման դեպքում՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ փակցված նյութերի հանման կարգը:

Համապատասխան իրավակարգավորման բացակայության պայմաններում առկա է այնպիսի իրավիճակ, երբ ընտրությունների արդյունքների վերաբերյալ վերջնական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ամիսներ շարունակ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերը ՀՀ մի շարք համայնքներում շարունակում են փակցված մնալ: Օրինակ, 2021 թվականի հունիսի 20-ին տեղի ունեցած ԱԺ արտահերթ ընտրություններից անցել է մոտ ութ ամիս, սակայն քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերը դեռեւս փակցված են մի շարք համայնքներում:

Այս պայմաններում հասարակությունը շարունակաբար գտնվում է նախընտրական մթնոլորտում, որը բացասաբար է անդրադառնում մարդկանց առօրյա կենսագործունեության վրա. քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերի առկայությունը նպաստում է ընտրությունների ժամանակ առկա լարված մթնոլորտի եւ հետընտրական սթրեսի պահպանմանը:

Խնդրի վերաբերյալ իրենց բողոքն են արտահայտում ՀՀ տարբեր համայնքների մի շարք քաղաքացիներ՝ ընտրություններից հետո քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութերի առկայությունը ներկայացնելով որպես իրենց բնականոն կյանքի ընթացքը հոգեբանորեն խաթարող գործոն:

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտություն է առաջանում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ՝ ներկայացված խնդիրներին լուծում տալու նպատակով:

Առաջարկվող կարգավորման բնույթը.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում ներկայացված իրավակարգավորումներով առաջարկվում է սահմանել դրույթ՝ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց, իսկ դատական կարգով բողոքարկման դեպքում՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո (բացառությամբ Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացնելու, ինչպես նաեւ վերաքվեարկություն նշանակելու դեպքերի) քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր եւ այլ նյութերի հանման վերաբերյալ:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծում ներկայացված լրացմամբ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում ներկայացված իրավակարգավորումներին համահունչ՝ լրացնել համայնքի ղեկավարի կողմից իրականացվող՝ պետության պատվիրակած լիազորությունների շրջանակը:

Նախագծերի փաթեթի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի կողմից:

Նախագծի մշակմանը մասնագիտական աջակցություն է ցուցաբերել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիք է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը, առաջարկներ են ներկայացրել ՀՀ Սյունիքի եւ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանները, որոնք հիմնականում ընդունվել են, իսկ մյուս մարզպետարանները առաջարկություններ, առարկություններ, դիտողություններ չունեն: Նախագիծը արժանացել է մարզպետարանների հավանությանը:

Նախագծի ընդունման նպատակը եւ ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ նախատեսվում է ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց, իսկ դատական կարգով բողոքարկման դեպքում՝ վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո քարոզչական պաստառ, քարոզչական

տպագիր եւ այլ նյութերի հանմամբ նպաստել քաղաքացիների բնականոն կյանքի վերականգնմանը: